

ԵԶԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա. Տ Բ Գ Ե Տ Ի

Ներկայ թւականին «Համելիս-Ամսօրեայի» Ա. համարում տպագրւեց իմ աշխատութիւնը «Դիբաքլարի» տաճարը վերնագրով, որը ենթագրել էի, թէ հին հեթանոսական մեհեան է և հաւանականաբար Եզի պաշտամունքին նւիրւած:

Յայտնի բան է 1500 տարւան գրական, չորս հազար տարւան արձանագրական և դարենոր աւանդական պատմութիւն ունեցող մի ազգ, որի յիշատակարանների մէջ այս երկարատև շըրջանում ոչ մի տեղեկութիւն չի նկատել, ծանր էր մի այսպիսի նորութեան մասին հարց բարձրացնելը և անչափ պատասխանատու Բայց, ինչպէս ասինք, փաստերն ու իրերը իրենք ասպարեզ իջած, մեզ գրգեցին այս յանդուդն քայլն անելու և ցոյց տալու հայ բանասէրներին, թէ իրենց նախորդները բազմապիսի պաշտամունքների մէջ, ի թիւս այլոց ունեցել են և երկրագործութեան հովանաւոր, երկրամշակութեան աջակից և լծակից պաշտպան մի աստուածութիւն, նման եղիստական Ապիսին, որի պաշտամունքը նկատելի է, որ տարածւած է եղել հին Հայաստանի այն բարձր սարահարթերում, որոնք անյիշելի դարերից ի վեր երկրագործութիւն են ունեցել և զբաղել են յատկապէս հացահատիկների մշակութեամբ. ցորեն, գարի, հաճար, կորեկ, կտաւատ, սիսեռ, զլզլ և ուրիշներ:

Եթէ մեր նախնիքը ունեցել են Ապիսի պաշտամունքը, չէին կարող պաշտելի Եզի համար մեհեաններ չկանգնել, նրա համար քուրմերի յատուկ դաս չունենալ և սրանց միջնորդութեամբ կապ չը հաստատել այդ ուժեղագոյն էակի հետ, որը ժողովրդի սընունդ ու կեանքն էր պահպանելու. Ահա այս մեհեաններն և այդ մեհեաններից գուրս բերւած իրերն են, որ զալիս են ապացուցանելու, թէ, որքան որ տքնել են մեր հեթանոս և քրիստոնեայ պապերը լնջել այդ պաշտամունքի հետքերը մեր երկրից, որքան որ ջանացել են իսպառ մոռացութեան մատնել նրանց գոյութիւնը, բայց իրենք՝ այդ պաշտամունքի առարկաները, թաղւած ու ծածկւած մի քանի տասնեակ դարերից ի վեր, հրապարակ են ի-

ջել գիտութեան և պատմութեան նիւթ մատակարաբելու և իրենց եզիստոսի Ապիսի հետ ունեցած խնամիութիւնը ապացուցանելու Եղը մէջ պաշտւած է եղել խալդերի ժամանակ, բարելական ամենահին քաղաքակրթութեան շըջանում:

Անշուշտ այս նիւթի մասին բանասէրների կողմից յիշատակութիւններ եղել են, միայն այնքան անորոշ կերպով են արտայայտւել, որ չեին կարող բաւարարել ժողովրդի պահանջին կամ ուշագրութիւն զրաւել: Մեր պատմմական Եղնիկ, Եղիկ, Եղնուկ անունների մասամբ աղօտ նշանները կարող են մտքերը զրաւել, բայց այդ յատուկ անունները բաւական չեն կարող լինել դրական ապացոյցներով հաստատելու այն, ինչ որ մեզ տալիս են այսօր աւերակ մենեաններից և պեղուած գերեզմաններից գուրս եկած իրական փաստերը:

Ա. Դեռ սրանից չորս տարի առաջ պ. Եր. Լալայեանի Գեղարքունի գաւառի Մըթաների ձորում կատարած պեղումը և բացած եղի գերեզմանը մի մեծ պացոյց է հայկական Ապիսի գոյութեան, բայց այդ առաջին քայլը չեր կարող այնքան հաւաստիւթիւն ներշնչել, եթէ չզային յետազար փաստերը: Մըթաների ձորի արենելքից արեմուտք ձգւած շարքի ամենաարևելեան ծայրը, նկատած բոլոր կուրգաններից ամենից բարձր կանգնած և ամենից ուշագրաւն եղել է Հայկական Ապիսի դամբարանը: Ինչպէս նկարագրում է պեղումը կատարող պ. Երևանդ Լալայեանը (տես Ազգ. Հանդէս զիրք XVIII), գամբանը դաշտի մէջ 20 մետր տրամադրով և մի մետր բարձրութեամբ կանգնած է եղել զարերից ի վեր: Սկզբում շատ բարձր է եղել զամբանը, բայց գիւղացիները նրա վրայի քարը կրելով ցածրացրել են: Գերեզմանի պատերը դաշտի մակերենոյթից ցած են եղել, ունիցել է 6 մետր երկարութիւն, 2 ։ մետր լայնութիւն և 4 մետր խորութիւն: Պատերն անաշ քարերով է շինւած եղել, առանց շաղախի և քարերով էլ ծածկւած: Հետևերաբար գործը շինւած է դեռ այն դարում, երբ մարդիկ կիրը չեին գտել:

«Այս ընդարձակ տարածութեան մէջ, գերեզմանի երկարութեամբ, հիւսիսային պատին կից, երեսը գէպի հարաւ, աջ կողքի վրայ պառկած էր մի մեծ եղան կմախք, որի գանգը վերցրի (№ 549). Գլխի մօտ ոչինչ չկար դրւած, իսկ պոչի մօտ երեք կաւէ ձագառածեւ խողովակներ (№ 544—546) և մի ինցի (№ 547), որ շատ նման է այժմեան մեր գիւղերում և քաղաքներում գործածող խնկանոցին: Արա մօտ գտնւում էր մի փոքրիկ, կաւէ արկղիկ, նշխերով զարդարուածի... Զագարաձե Յ խողովակները, որ յիշեցնում են ատրուշանները, զրւել են կրակի:

վրայ, նրան աւելի բորբոքելու նպատակով և սրանց մէջ ածել խռոնի, որ դրած է եղել այն կաւէ արկղիկի մէջ...»

Բ. Շիրակի գաշտում, Դիրաքլար գիւղի արևմտեան կողմը գտնուած կուրգանը փորել են գիւղացիները սրանից տասներկու տարի առաջ: Այդ կուրգանում հչ թէ պաշտուած եղի ոսկրոտիքն են գտել այլ ինչպէս երեսում է մի քրմապետի կմախքը: Քրմապետի վզին գտնուել է պղնձից շինուած մի հորթի զլուխ, որը ներկայում գտնուում է Զւարթնոցի վանահայր Խաչիկ վարդապետի մօտ Կմախքի մօտ եղել է մի փտած դաւազան, որի պըղնձէ զլուխն ու ծայրը ապացոյց են նրա այդ իշխանութեան, սրանը պահուում են մինչև օրս գիւղում, տանուտէրի մօտ: Գաւազանի գլուխն ու ծայրը 1911 թ. Օգոստոսի 16-ին մեզ ներկայացրին գիւղացիները, որոնք պահել էին թանգարժէք գնով ծախելու նպատակով: Գաւազանի գլուխը իր քանդակներով այնպիսի զարդ էր Ներկայացնում, որ կարող էր գեղարւեստագէտի աչք հրապուրել: Գիւղացիք պատմեցին, թէ այդտեղ գտնուել է մի պղնձէ եղի զլուխ ևս, որը տարել են էջմիածին թանգարան դնելու նպատակով, բայց այս տարի ապրիլի սկիզբներին նոյն թանգարանում շատ փնտրեցի չգտայ: Ոչ ոք տեղեկութիւն չունի այս մասին:

Ալէքսանդրապոլից Գեալին-Ղայայի բարձունքը զննողը կարող է նկատել Դիրաքլար գիւղը, որը գտնուում է երկու սրածայր և բոլորովին եղի եղիշերներին նման մահիկաձև լեռների մէջ տեղը, հեռուից գիտողն իսկոյն կարող է նկատել այդ եղիշերանման լեռները, որոնք Շիրակի գաշտի արևելքից զննում են ամբողջ տարածութիւնը մինչև Ալաջաները, Սաղլուջաները, Եամնիները, Զարիշարի լեռները և Աղբարան: Ամեն կողմից գիտակով նայողը կարող է տեսնել այդ երկու բարձր եղիշերանման լեռների մէջ այն սև բիբը, որը բռնում է Դիրաքլարի տաճարը Հաւանական է թւում, որ նոյնիսկ եղի մեհեանի տեղի ընտրութեան մասին գործել է մեր պապերի միտքը և այս բնական մահիկաձև եղիշերների մէջ են գետեղել այն նէրական եղի տաճարը, որը պիտի հովանաւորէր ամբողջ Շիրակի երկրագործութիւնը և որին ամեն առաւօտ արև գալին պիտի դիտէր ամբողջ գաշտի ազգաբնակութիւնը, երեսն արևելք յարած, իր աղօթքն ու խնդրւածքը կատարէր, թախանձէր պահպանելու և աճեցնելու իր ձեռքի աշխատութիւնը, իր ամեն օրւան պարէնը, որոնցով պիտի կերակրէր իր մանր ու խոշորը:

Սեանայ լճի ափերից հչ շատ հեռու Մըթքի ձորի և Շիրակի գաշտի այս երկու երեսները չպիտի կարողանային դրակա-

մօտ ութ փարսախ հեռաւորութեան վրայ տարածւում է ինպէլի Դուշի թերակղզին, որի բարձր լեռները սրակող իջնում են լճի ափերին և պարիսպների նման պաշտպանում թերակղզին։ Այս թերակղզու ընական ամբութիւնների վրայ կանգնած է Գէօ-զեարշին Դալան—Աղաւնու բերդը, որ հին հին գարերից ի վեր մինչև վերջին ժամանակներս, որպէս անառիկ ամրոց ծառայել է երկրի իշխողներին, որոնք իրենց ընտանիքն ու գանձարանը




Ա. Աֆբանգիլեանի ձեռք բցած եղի արձանը Դուշի գանձառն

այդտեղ են պահպանելու Այս բերդի պարիսպները ուսումնասիրո-ղին յեշեցնում են ինչպէս Կիկլոպեան, նոյնպէս արուեստի զար-դացման և անկման բոլոր շրջարները։

Այս բերդի շրջապատում գտնուած պղնձէ, արոյրէ, պող-

պատէ նետերը, սրերն ու դաշոյնները, նոյն իսկ գնդակներն ու ոռմբերը հետամտողին պատմում են յիսուն—վաթսուն դարի այն արկածները, որոնք տեղի են ունեցել այդ անառիկ գանձարանի շուրջը: Այդ բերդում նկատելի են բազմաթիւ ապարանքների, զօրանոցների, մթերանոցների և ջրամբարների հետքերը, որոնք շինել են անյիշելի դարերից ի վեր, պարզ և սրբատաշ քա-



Ա. Աքթանդիկեանի ձեռք քցած եզի արձոնը Դուչչի գտնուած:

իրով, աղիւառվ, կրաշաղաղով: Բերդի պարիսպների դաբբազներից մէկի ճակատին սրբատաշ քարերի վրայ դրօշմուած է արարական տառերով և Արտուր-Մուզաֆէր—Նիւաէյն Բահադուրի տնունը, որը Մեծ Շէյխ—Հասան Իլքանիի թոռը և դաժան Ինվէյսի իշխան Իլքանիի որդին էր և ապրում էր 15-րդ դարի վերջերը—Լէնկթեմուրի աւերածութեան ժամանակ:

Այս բերդի ստորոտում, երեսը դէպի արևմուտք—Սալմասի դաշտավայրին դարձած կանգնած է «Ղարաբաղ-քէնդը», որն իր

անունը տուել է լճակի մէջ տարածուած թերակղզուն։ Այսօրուան գիւղը իւր գիրքով և աւերակներով անցորդին ասում է, որ ինքը մի ժամանակ ամբողջ նահանգի թագուհին է եղել Նոյն իսկ Պասկինի գաղթից առաջ, մինչև 1828 թ., այս գիւղում ապրում էին 800 անդ աւելի հայեր, որոնցից այսօր մնացել է 10 տուն։ Անին մեծ եկեղեցի կոփածոյ—սրբատաշ քարերով շինուած, բաղիլիք ծածկով։ Այս գիւղում ամեն մի քայլափոխում անցորդը տեսնում է այնպիսի հնութիւնների հետքեր, որոնք պատկերացնում են այն մեծ կուլտուրան, որը տարածուած է եղել Ռւբեյայի լճի արևմտեան ափերուն։

Ղարաբաղ քէնդից (գիւղից) երեք կիլոմետր տարածութեան վրայ գտնում է Ղուշին գիւղը և այդքան էլ հեռու է սրանից Քեաֆիր-Ղալան։ Փորձառու և զնող աչքը կարող է իսկոյն նկատել, որ այսօրուան անջատուած Ղուլիչի և Քեաֆիր-Ղալա գիւղերը մի ժամանակ Ղարաբաղի հետ միացած են եղել, միայն թաթարական և արաբական աւելիչ ձեռքերն են նրանց կործանել և իրարից անջատել։


Այս Ղուշին գիւղում—Անջալ Մահալում 1905 թուականին նորանոր բնակարաններ կառուցանելու համար հիմքեր փորելիս, բացուց մի փոքրիկ մեհեան, սրբատաշ խոշոր և կարծր քարերից շինուած։ Երնութիւնը գլուած է, բայց պատերը ցոյց են տալիս—հաւանականաբար, թէ նա էլ բաղիլիքի ծածկ է ունեցել։ Անյիշատակ գարերից ի վեր այս մեհեանը մնացել է աւերակների և հողի տակ, որի մէջ, սրբատաշ քարի պատուանդանի վրայ զըտնուցան երկու արոյքէ արձաններ։

Արձանները մէկը միւսից միայն մի սանտիմետր ցածր էր և այդքան կարճ, որով կարելի է ենթադրել, թէ մէկը ցուլի է—միւսը՝ գուցէ եղի։ Երկուսի էլ կազմն այնքան իրար նման են, որ ըոլորումին իրարից տարբերել չէ կարելի։ Գլխներն այնպիսի քանդակներով զարդարուած են և այնպիսի գեղարուեստական կազմունին, որ ինքնին խօսում են զնողին և յայտնում, թէ իրենք եղել են դարերով պաշտամունքի առարկայ։

Այս արձանները գտնուելով քարէ քարձր պատուանդանի վրայ, ծածկուած լինելով մեծ մեծ քարէ ծածկոյթով, զերծ են մնացել խոնաւութիւնից և չեն ենթարկուել փառութեան։ Անգութ և տպէտ գանողները, արձանների արտակարգ ծանրութիւնը համարում են ոսկու գանձի նշան և վայրենաբար դարբնի մուրճի հարուածների տակ փշում են երկուսն էլ։ Բարեբախտաբար շուտով վրայ են հասնում գիւղի տէրերը և փշրանքն ապատում են այդ տպէտների ձեռքից, որոնք, երկիրը կուռքի մանրունքի ներ-

կայութիւնից ազատելու համար, պատրաստուած են եղել ծովը թափելու արձանների փշրանքները:

Արձանների երկուսի էլ գուլիքը չեն փշրուած, ամբողջապէս կան, մինը ներկայիս զանուում է Թիֆլիսում Մաշիդ-Մալթանէի թանգարանում, միւսը, որ մի ժամանակ նուէր էր զրկուած Մահմէդ-Ալի-միրզա էքս-շահնին, վերջերս աճուրդից գնել էր Արս-Աքթանդիլիանը և տարաւ Եւրոպա վաճառելու:



Մաշիդ-Մալթանէի ձեռք քցած ցուլի
արձանը Ղուչչի գտնւած:

տական նրբութիւն ու ճշտութիւն են ներկայացնում, որ չի կարելի ենթադրել, թէ այդ արձաններն իրենց անցեալ զարգացման պատմութիւնը չունենան:

Եղի պաշտամունքը, ինչպէս երևում է թէ այս արձաններից և թէ Սևանայ լճի ափերին մօտ եղած պեղումներից, պէտք է գոյութիւն ունենար մեր երկրում մեզանից 40—45 դար առաջ՝ նա որպէս ժամանակակից եղիպատական Ապիսի, իր ծագումն ու զարգացումն ստացել է նրա հետ միաժամանակ: Խնչպէս երևում է, Հայաստանում աւելի կարճ է տևել Ապիսի պաշտամունքը, քան թէ Եղիպատում, քանի որ Եղիպատոսի Ապիսի պաշտամունքի մասին խօսել է Հերոդոտը և Հայաստանի վերաբերմամբ լոել պատմագիրների հայրը:

Անշուշտ այս արձանները կենդանի վկայ են Եղի-պաշտամունքին մեր երկրում, որոնք ապացուցանում են, թէ մեր աշխարհի ամեն մի դաշտավայրում երկրագործութեան հովանաւոր Ապիսը ունեցել է իր մեհեանը Հողագործութիւնը — հացահատիկների մշակութիւնը որբան որ հին է և իւր արմատները զըցած է մեր երկրում, Եղի — պաշտամունքն էլ նրա հետ գուգընթաց է երևում:

Անշուշտ այս կատարելութեան հասած արձանագործութիւնն իր անցեալն ու զարդացման ասաիճանները պիտի ունենայ: Այստեղ ներկայացուած Եղի բրոնզէ արձանների գիբները այնպիսի գեղարուես-

Դ. Դուշիկի աւերակների մէջ գտնուած եղի արձանների հետ դանուած են նոյնպէս մի պաշտամունքի հասած Ապիսի մոմիացրած կմախք, որը տարաբազրաքար փշրուած ու թափուած է ծովը։ Այդոնդ գտնուած է մի բրոնզէ օձ, որը պահուած է կալուածատիրոջ մօս, արծաթի ամաններ, և ուրիշ մաշուած ու քրթուած զարդեր։



Մէջիկ-Սոլյանէի ձեռք քցած գտուած կտորը, Դուշի գանւած։

Ե. Այս զարդերի մէջ ամենաչական տեղը բռնուած է մի գտտի—կամար, պղնձից, որի վրայ քանդակուած են շարք-շարք երեք առիւծ և երեք ռեզ։ Այս գտուու վրայ նկարուած են կարծես թռչող ցուլեր, որոնք սաւառնուամ են օդի մէջ։ Այնքան արագ են թռչում ցուլերը, որ նրանց հետամտող առիւծները յետ են մնացել և չեն կարողանուած համնել իրենց հալածած ցուլերին։

Անշուշտ այս գտտին ապացոյց է որ նա ծառայել է Ապիսի մեհեանի քրթապետին, որը կրելով այդ զարդը, ամրապնդել է իր մէջքը կտուելու բնութեան աւերիչ և կործանիչ տարրերի դէմ, որպէսզի երկրուած ամեն կողմ հաստատէ երկրագործութիւնը, երկրամշակութեամբ ամրացնէ հողի և մշակողի մէջ եղած կապը և թափառական տարրերին, խաչնարածներին ու որսորդներին հաստատաբնակ զարձնէ։

Ծուլերի մէջ կանգնած են ուսկեհատ, գոհարահատ հացահատիկների արակերը, որոնց մէջ քանդակագործը զրել է իր խորհրդաւոր մտքերը, Բայց կործանարար ժամանակը տարաբազրաքար մաշել, քրթուել և այնպէս է փշրել այդ գտուու պղնձի զարդարանքները, որ նրա վրայ քիչ բան է մնացել մեզ լուր հասցնելու մեզ-

նից քառասուն դար առաջ ապրողների մտքերի, խորհուրդների և ձեռակերտների մասին:

Ղարաբաղ թերակզզին Ուրմիայի լճի մէջ այնպիսի զիրք է գրաւել անյիշատակելի ժամանակներից, որ նրա ուսումնակրութեան համար արժէ մեծ զոհողութիւններ կատարել և պարզել, թէ ինչ պարագաներ են ծնունդ տուել ինյապէս Ապիսի կուլտին, նոյնպէս այն մեծ փիլիսոփայ Զրադաշտին, որի վարդապետութեան հետեւց իրանը աւելի քան քսան դար:

Վանի լճի հիւսիսային ափերում—Արմէշի գաւառում և դաշտում նոյնպէս մի մեհեանում գտնուած է մի արոյքէ արձան, որն իբր թէ ծախուել է ճանապարհորդ անզլիացիների, բայց քանի որ այս մասին դրական փաստ չըկայ, չենք կարող հաւասարիացութեր տալ ընթերցողին, մինչև աւելի մանրամասնութիւններ ձեռք բերելու:



Ակուբակի Վարզիս գիւղի ՀՅՈՒԿԱՐԱՎՈՒՄ
գանւած եղի արձանը, որ ձեռք է բերել
Յ. Բայրուրզցեանը,

Է. Ախալցխայում պ.
Յ. Բայրուրզցեանը ձեռք է բերել մի ցուկի բրօնզէ արձան, որը 10 սանտիմետր երկարութիւն և 7 սանտիմետր բարձրութիւն ունի: Այս արձանի զլուխն ու եղիշիւնները որքան որ գեղեցիկ են, այնքան կոպիտ է մարմինը, մանաւանդ ուղերը: Արձանը ծախողները տանել են, որ զտել են Ախալցխալաքի մօտ Վարզիս գիւղի շրջանում: Առաջին հայեացքից նկատելի է, որ այդ Ապիսի արձանն էլ ձուլուել է պաշտամունքի առարկայ դառնալու համար: Առաջին հայեացքից այդ արձանի զլուխը, զունչը, մանաւանդ մահիկաձև եղիշիւրներն

ասում են, որ իրենք ժողովրդի պաշտամունքի առարկայ են եղել դարերով: Խնչպէս այսօր ամեն տուն սրբերի պատկերներին մի անկիւն է նուիրում, երկրամշակութեան կազմակերպութեան առաջին դարումն էլ ամեն երկրագործի օջախի զլուխն բազմեցրած են եղել եղի արձանը, որը հովանաւորում էր տան անասուններին, արտին ու բօստանները:

Ը. Խօսելով մեր աշխարհում գոյութիւն ունեցած Եղի պաշտամունքի մասին, չենք կարող լուռթեան տալ աւանդաբար մեզ հասած այն պաշտամունքները, որ շարունակում են մինչև մեր օրերը: 1864 թուականին հանապարհորդական յատուկ արշաւանքից յետոյ, վերջապէս Շաբանեան Կարապեաը Սղերդի մի վանքում գնում է մի սպիտակ գոմէշ, որը ոտքից մինչև գլուխ ոչ մի սպիչունէր: Այս գոմէշի նոյն իսկ սմբակները և եղջիւները բոլորովին սպիտակ են եղել և անասունը վանքի մէջ պաշտամունքի տարկայ: Այս գոմէշի մազերից ժողովուրդը հատ հատ տանում էր գցում իր ալիքրի ամբարը, որպէս զի իր շտեմարանի հացն անպակաս լինի: Նրա կերը մատակարարում էր ամբողջ գաւառը իր ընտիր բերքերից:

Այս գոմէշը կառավարական ոյժով, մանաւանդ ֆրանսիական ոսկիների ձգումով Շաբանեանը հազիւ կարողացել էր զուրս բերել վանքից, որտեղ անասունն ունիր իր յատուկ ախոռն ու մառուրը, որին մաքրութեան և փափկութեան մէջ ինսամելիս են եղել ինչպէս վանականները, նոյնպէս և նրան նուիրուած կիներ:

Ինչպէս պատմում են, գոմէշն ունեցել է իր յատուկ սպասաւորների ավիտան, որոնք նոյն իսկ լողացնում անուշանոտ իւղերով անասունին օծելիս են եղել պարբերաբար: Այս գոմէշը, որ գնուած էր ֆրանսիական կառավարութեան յատուկ պահանջմամբ, այդ թուականին ուղարկուած է Փարիզ, որի մասին ինչ ինչ ծանօթութիւններ տպագրուած են Journal Asiatique-ի նոյն թւականի մէջ:

Թ. Սպիտակ Եղ պահուում էր մինչև վերջին դարը Մշու Առաքելոց վանքում, Մակուի ս. Թաղէոսի վանքում, Վանի վանքերում, բայց կղերի կողմից աւելորդապաշտութիւն և հեթանոսական կրապաշտութիւն նկատուելով, միշտ տքնել են խուսափել և ծածկել ինչպէս մեծաւորների, նոյնպէս գիտակիցների աշերից նոյնիսկ Madame Dieulafoy-ն իր ճանապարհորդութեան նկարագրութեան մէջ արձանագրում է և պատկերը տալիս է մեր ստորև ներկայացրած եպիսկոպոսի սև եզի, որը նոր—Զուղայի—Սպահանի վանքում պաշտամունքի առարկայ է եղել սրանից 32 տարի առաջ: Անշուշտ եպիսկոպոսի եզը չէր կարող Ապիսի փառքն ունենալ, բայց վանքերի մէջ ցուկերի բանած դիրքի շարունակութիւնը կարող է տեսնել ամեն մի ուսումնասիրող: Եթէ հայրենին երկրում հայերի վանքերում սպիտակ ցուլն ու գոմէշը պաշտամունքի առարկայ են մնացել մինչև Խ-րդ դար, եթէ այդ պաշտամունքը մեր վանականները տարել են մինչև Սպահան երեք դար առաջ, անշուշտ այս մի այնպիսի սովորոյթի աւանդական

շարունակութիւնն է, որ յիշեցնում է շատ ու շատ հին դարերի պաշտամունքներ։

ԺԱ. Այս պարագայից աւելի պիտի գերազասել հայ գիւղացու սովորական վարմունքը իր լժակից եղի հետ Ո՞վ չի լսել գիւղացու ամեն բոլք եղին կրկնած փաղաքշանքը, — Ախալէր ջան, բարա ջան, ընկեր ջան, խօսքերը Ո՞վ չի տեսել այն սուզն ու շիւանը ընկած եղի պատճառով։ Լծկան եղը ծերանալիս, զիւղացին նրա վզին դանակ չի քաշիլ, նա անճարացած կը տանի և կը փոխէ աշառների հետ։

Շատ անգամ նկատուած է, որ լծկանին փորձանք պատահելիս, փոխանակ դանակ քաշելու, վիզը կտրելու, որ կարողանան հանդարտ խղճով միան ուտել, զիւղացին նախապատռել է զրկելու այդ մոացուից և տարել է եղն արտի մէջ հորել։